Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3386

231
9-14

2010

ՎԵՐՋՆԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՑ

ԱՌ

ԱՐԵՒՄՏԵԱՑՍ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՌԵԱՆՑ
— 1873 —

281
Գ-14

ՎԵՐՋՆԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՑ

ԱՌ

ԱՐԵՒՄՏԵԱՑՍ

ԱՐՏԱՐԵԱԼ

Ի ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՂԱԶԱՆՃԵԱՆ ՍՈՒՔԻԱՍ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԷՆ ԱՆՏԻՈՔԱՅ

ԵՒ

ԱԲԲԱՀԱՅՐԷ ԱՆՏՈՆԵԱՆ ՈՒԽՏԻՆ

№ 543
№ 545
№ 246

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ԳԱՎԱՖԵԱՆ

— 1872 —

11169

5036-50

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ուղղափառութեան կրկին կերպարանքն, կամ լաւ եւս ըսել, անոր կացութեան կրկին տեսակը մի միայն և գլխաւոր առիթ եղաւ ներկայ ազգային յուզուած խնդրոյն, ծագած երկպառակութեանցը և շփոթութեանց և կաթոլիկ տերութեանց սոյն խնդրոյն մէջ ըրած միջամտութեանցը, խնդիր մի՝ որ յաւէտ Արեւելեան եկեղեցական պէտք է կոչել։

Ուղղափառութիւնը մի միայն ըլլալով իր էութեան մէջը, երկու զանազան կերպաւորութիւն ունեցաւ Եկեղեցւոյ առաջին դարերէն 'ի վեր, մին Արեւմտեան՝ ուսկից յառաջ եկաւ Արեւմտեան եկեղեցին, և միւսը Արեւելեան՝ ուսկից ծագեցաւ Արեւելեան եկեղեցին։

Աւելորդ և մանաւանդ խնդրէն դուրս կսեպենք հետազօտելը՝ թէ որո՞նք եղան այս կրկին զանազանութեան ծագման պատճառները, որոնց մէջ թերեւս կրնան առաջիններեը համրուիլ սովորութեանց և բերմանց տարբերութիւններն ալ, որոնք աշխարհիս երկու գլխաւոր՝ այսինքն Արեւելեան և Արեւմտեան ժողովուրդները միջա

յատկացուցած են զանազան կերպով։ Միայն այս ստոյգ է որ այս երկու Եկեղեցիները մի ըլլալով՝ հաւատոս, միշտ տարբեր եկեղեցական բարեկարգութիւններ և տարբեր ծիսեր ունեցան. որ է ըսել, երկու Եկեղեցեաց գոյութիւնը մի ըլլալով, կացութեան եղանակին մէջ միայն տարբեր եղան։

Եթէ մէկ մը սոսկ վեր ի վերոյ դիտողութիւն մի եւս ընելու ըլլայ այս երկու Եկեղեցեաց զանազան կերպաւորութեան վրայօք, անշուշտ կհամոզուի մեր այս ըսած ճշմարտութեան վրայ, որն որ Եկեղեցւոյ հետ սկսաւ և հասաւ մինչեւ մեր օրերը։

Ուրեմն ի՞նչպէս կըլլայ՝ որ ոմանք անիրաւ պահանջմունքներ կընեն և այլք խառնաշփոթ կմտածեն, ոմանք ալ անմտադրութեամբ մը Արեւելեան ուղղափառները կդատապարտեն և անոնց դէմ կյարձակին, և ասկէց կծագին նաեւ այսչափ անվերջանալի խնդիրները։

Այս ամեն երկդիմութեանց և տարաձայնութեանց մէկ հատիկ պատճառը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ Արեւմտեան ուղղափառաց շփոթ ծանօթութիւն ունենալը Արեւելեան ուղղափառ Եկեղեցւոյ յատուկ կազմութեան, կերպաւորութեան և օրինացը վրայօք։ Այսինքն, Արեւմտեայք թէպէտեւ գիտեն ստուգիւ՝ որ Արեւելեան Եկեղեցին իրենցմէ տարբեր կացութիւն ունի, սակայն առ հասարակ չեն գիտեր կամ կշփոթեն թէ ո՞րն է այս տարբերութիւնը.

արդեօք ծեսերուն և կամ արարողութեանց տարբերութե՞ն վրայ կկայանայ, եթէ աւելի ծանր և կենսական յատկութիւններ կան՝ որոնք յատուկ Եկեղեցի մը կկազմեն զայն և կը զանազանեն Արեւմտեան Եկեղեցիէն։

Արդ՝ եթէ այդ կենսական յատկութիւնները կան, որոնք զԱրեւելեան Եկեղեցին կզանազանեն Արեւմտեանէն, ուրեմն Արեւելեան ուղղափառները չունի՞ն արդեօք անբռնաբարելի իրաւունք մը չէ թէ միայն անարատ պահելու նոյն յատկութիւնները, այլեւ իբր իրենց սեփական գոյութեանը հիմն նկատելու զանոնք։ Եւ եթէ իրենց գոյութիւնը պահելու և պաշտպանելու իրաւունքը և պարտաւորութիւնը ունին, ապա ուրեմն ունին եւս իրաւունք մերժելու որ և իցէ իրենց գոյութեանը դէմ եղած դաւադրութիւնները և յարձակումները։ Եւ մինչ այսպիսի արդար և իրաւացի պաշտպանութեան մը համար՝ հերձուածողութեան կեղտ մը վրանին դրուելու ըլլայ, ո՞չ ապաքէն յայտնի և անիրաւ զրպարտութիւն մի կըլլայ այն։ Եւ գործակից չե՞ն համարուիր այսպիսի յայտնի անիրաւութեան այն անձինքներն ալ՝ որոնք համախոհ և համամիտ կգտնուին, կամ կերպով մը կհաստատեն, կամ իրենց միջամտութեամբը ձեռնտու կըլլան ասանկ մէկ անիրաւ և զրպարտիչ դատողութեան մը։

Այս է ահաւասիկ խնդրոյն ներկայ դիրքը իր պարզութեան մէջ։

Արդ Արեւելեան ուղղափառ Եկեղեցին իրեն յատուկ արարողութենէն զատ՝ ունի դարձեալ սեփական և իւր գոյութիւնը կազմող յատկութիւններն ալ, որոնք ճանչցուած և յարգուած են մինչեւ մեր օրերս ընդհանուր ուղղափառ եկեղեցիէն, անլուծանելի են անընդհատ սովորութեամբ և տեւողութեամբ ժամանակի, ընկալեալ են ընդհանուր տիեզերական ժողովքներէն, կրկին և կրկին յարգուած են մինչեւ մեր օրերս նոյն իսկ անոնցմէ՝ որոնք կուզեն այսօր բռնաբարել զանոնք. այն յատկութիւնները կըսեմ, որոնք ամէնքն միատեղ կըկազմեն այն յատուկ բարեկարգութիւնը՝ որ Արեւելեան կկոչուի՝ և արարողութեամբը հանդերձ Արեւելեան ուղղափառ Եկեղեցւոյն ունեցած սեփական կացութիւնը տարբեր կկազմէ, որով Արեւմտեան Լատին Եկեղեցիէն կզանազանի:

Մէկդի թողլով արարողական մասը, որ առժամս խնդրոյ ներքեւ չէ, սեփական բարեկարգութեան նկատմամբ (զոր վայելէ Արեւելեան Եկեղեցին, կամ որ նոյն է իւր իսկ ինքնութիւնը) այդ բարեկարգութիւնը կըսենք հիմնուած և կերպաւորուած է այն յատուկ Նուիրապետութեան վրայ, որն որ եկեղեցական Արեւելեան Վարչութեան կազմութիւնն է: Լաւ եւս պարզենք խօսքերնիս:

Նոյն իսկ Հռոմայու իրաւաբանական կանոնաց համեմատ՝ Հռոմայ Քահանայապետը կվայե-

լէ այս արտօնութիւնները որ մինչդեռ ընդհանուր Եկեղեցւոյ Պապ կկոչուի, 'ի մասնաւորի է Պատրիարք Արեւմտեան, Նախագահ Իտալիոյ և Եպիսկոպոս Հռոմայ քաղաքի: Ուրեմն մինչդեռ բոլոր Արեւմտեան ուղղափառները կպատուեն և կճանչնան զայն ոչ միայն իբր Պապ՝ այլ և իբր իրենց Արեւմտեան Պատրիարքը, Իտալացիք նաեւ իբր՝ իրենց սեփական Նախագահը և Հռոմայեցիք ալ աւելի եւս իբր իրենց տեղական եպիսկոպոսը, ընդհակառակն Արեւելեան ուղղափառները Հռոմայ Քահանայապետը միայն իբր Պապ և իբր ընդհանուր Եկեղեցւոյ Նախագահ կճանչնան և կպատուեն. ըստ որում Արեւելեայք՝ Պատրիարք և անմիջական Նուիրապետական գլուխ ճանչնալով իրենց Արեւելեան աթոռոց Պատրիարքները, ոչ երբէք Հռոմայ Քահանայապետին Արեւմտեան պատրիարքութեան ներքեւ կլինան, թող թէ անոր արքեպիսկոպոսական և եպիսկոպոսական կառավարութեանը:

Ահաւասիկ պարզուեցաւ թէ ի՞նչպէս Արեւելեան ուղղափառները Հռոմայ Պապին հետ 'ի միութեան մնալով եկեղեցական կախումն ունենալու եղանակին մէջ կտարբերին Արեւմտեան ուղղափառներէն, որոնք չէ թէ միայն իբր Պապ, այլ և իբր իրենց սեփական Պատրիարքը կախումն ունին Հռոմայ Քահանայապետէն, ինչպէս վերը ըսինք: Եթէ այն Արեւմտեան ուղղափառները՝ որոնք կկարծեն այսօրուան օրս

ուղղափառութեան շահուն ջատագով հանդիսանալ, քիչ մը ծանօթութիւն ունեցած ըլլային այս էական տարբերութեան վրայօք, անշուշտ համոզուած կըլլային որ Արեւելեան ուղղափառներէն պահանջած Հռոմայ Քահանայապետէն կախումն, յար և նման իրենց ունեցած կախմանը, իբր Արեւմտեան Պատրիարքէ, ուրիշ բան չէ՝ եթէ ոչ նոյն իսկ Արեւելեան Եկեղեցւոյն բնաջինջ կորուստը և անոր դպրութեան սեփական յատկութեանցը, Նուիրապետութեանը և իւր յատուկ եկեղեցական բարեկարգութեանը ջնջումն պահանջել, ընդդէմ ամենայն առտուածային, եկեղեցական և մարդկային իրաւանց։ Եւ աւելի ծուռ սկզբան հետեւած կըլլան՝ եթէ Արեւմտեայք, Արեւելեան ուղղափառութեան վրայ ճիշտ գաղափար ունենալու համար, վերոյիշեալ մոլար պահանջողութեանցը վրայ իրենց դատմունքը հիմնելու ըլլան, որովհետեւ այսպիսի դատումն մը յաւէտ նախապաշարումն կըլլայ, այնչափ աւելի սխալ և անհիմն, որչափ ստոյգ և իրաւացի է որ ուղղափառ Արեւելքը միշտ 'ի սկզբանէ հետէ իր առանձին Նուիրապետութեամբը, օրինօքը և ձեւովը կազմուած և հաստատուած է։

Բաւական է յառաջ բերել Փլորենտեան ժողովքին սիւնհոդոսական մեծահռչակ դաշնադրութիւնը՝ որով փոփոխակի Պապը և Արեւելեան Պատրիարքունք մէկմէկու հետ կապուեցան Արեւմտեան ընդհանուր ժողովքի մը

մէջ, Արեւելեան Պատրիարքունք Պապին ընդհանուր Եկեղեցւոյն վրայ գլխաւորութիւնը ճանչնալով և փոխախոսդարձ Պապերն ալ Արեւելեան պատրիարքական աթոռոց սեփական իրաւունքները անարատ և անբռնաբարելի ըլլալը ճանչնալով։ Եւ այս ոչ թէ Պապերուն կողմանէ զիջողութիւն մը ըլլալով, այլ ընդհանուր ժողովոց գործքերուն և եկեղեցական կանոնաց մէջ այսպէս աւանդուած ըլլալուն համար. ինչպէս նոյն Փլորենտեան ժողովը կբացատրէ յետագայ խօսքերով. "Ըստ այնմ տարազու՝ որպէս աւան-
"դեալ է 'ի գործս տիեզերական ժողովոց և 'ի
"սուրբ կանոնս"։ Եւ այս տարազը և եւս կը-
բացատրէ ըսելով. "Այսինքն անարատ պահ-
"ուելով բոլոր արտօնութիւնները և իրաւունք-
"ները Արեւելեան Պատրիարքաց"։

Ուրեմն ի՞նչ իրաւամբ Արեւելեան ուղղափառները պիտի զրպարտուին և վատահամբաւ պիտի ըլլան՝ երբոր ուրիշ բան չեն պաշտպաներ եթէ ոչ իրենց պատրիարքական աթոռոց սոյն անեղծանելի իրաւունքները և սոյն սրբանուէր Փլորենտեան դաշնադրութիւնը ընդդէմ ամենայն բռնական զեղծմանց Հռոմայ աբբունեաց (Curie Romaine)։

Սակայն աւելի եւս պարզենք խնդիրը և աւելի դիւրիմաց ընենք ամենուն։

Ինչպէս վերը ըսինք, զանազան ըլլալով Հռոմայ աթոռոյն արտօնութիւնները, հետեւաբար տարբեր են նաեւ անոնց ենթակաները. տար-

բեր է իւր պապական իրաւանց ենթակայն, տարբեր է իր պատրիարքական և եպիսկոպոսական իրաւանց ենթակայն։ Արդ՝ եթէ Հռոմայ Քահանայապետը բոլոր Արեւմուտքի մէջ նորանոր եպիսկոպոսական աթոռներ կհաստատէ և կամ կվերցնէ, եպիսկոպոսներ կկարգէ և կամ աթոռազուրկ կընէ, թեմական օրէնքներ կհրատարակէ, սահմանադրութիւններ կփոփոխէ, խիստ հաշիւ կպահանջէ իրեն Արեւմտեան Եպիսկոպոսաց մատակարարութեան վրայօք, կկլլէ նոյն աթոռներուն սեփական ինչքերը, այս ամէնքը կընենք և ասոր նման բազմաթիւ տրամադրութիւններ եթէ 'ի գործ կդնէ և կամ 'ի գործ դնել կպահանջէ (1), միայն իրեն պատրիարքական իրաւանցը կպատկանի, որ է ըսել, 'ի գործ կդնէ զանոնք՝ միայն իբր պատրիարք Արեւմուտքի, կամ որ նոյն է ըսել, Լատին Եկեղեցւոյ։

Բայց ոչ երբէք նոյնպէս Արեւելքի վրայ, որն որ 'ի սկզբանէ հետէ իւր սեփական Պատրիարքները ունենալով, անոնց միայն պատկանեցաւ

(1) Հռոմայ արքունեաց չափազանց պահանջողութիւնները պատճառ տուին այն զանազան եւ բազմաթիւ Քօնքօրտաներուն, որոնցմով կաթոլիկ տէրութիւնները սահման մը դնել ուզեցին Հռոմայ Քահանայապետաց նոյն իսկ Արեւմտեան պատրիարքութեան իշխանութեանը։

և կպատկանի 'ի գործ դնելու պատրիարքութեան այն իրաւասութեան իրաւունքները իրենց սեփական թեմերուն մէջ, ըստ Փլորենտեան ձայնի. "Անարատ պահուելով բոլոր արտօ-"նութիւնները և իրաւունքները Արեւելեան "Պատրիարքաց"։

Պէտք է գիտնալ որ բաց 'ի այս պատրիարքական աթոռոց իրաւունքներէն՝ Արեւելեան ուղղափառները մինչեւ ցայսօր հաստատուն պահեցին նոյնպէս այն առաքելական սովորութիւնը և հնաւանդ իրաւունքը իրենց եկեղեցական նուիրապետութեան անձինքները ընտրելու, Եպիսկոպոսունք Գղեր ու ժողովուրդ իրենց սեփական Պատրիարքը ընտրելով, Գղեր ու ժողովուրդ՝ իրենց թեմական Եպիսկոպոսները ընտրելով։

Արդեօք Արեւմտեայք ալ այս իրաւունքներն ունի՞ն թէ չունին, կամ թէ ունենալով կորուսե՞ր են հռոմէական կեդրոնացուցումէն (centralisation), փոյթ չէ Արեւելեայց։ Բայց եթէ կպահանջեն Արեւելցիներէն որ ճշմարիտ ուղղափառ համրուելու համար անոնք ալ հրաժարին իրենց իրաւունքներէն, զորոնք դարական ժամանակը, անոնց անընդհատ գործադրութիւնը, նախագրութիւնը և նոյն իսկ Արեւելեան Եկեղեցւոյն կազմութիւնը նուիրական ըրած են Արեւելեայց համար, կարի հեռի են իրաւախոհ և արդար դատմանէ։ Կամ ուղղափառ Արեւելեայք միշտ ուղղափառ մնալով՝

կրնային այս իրաւունքները վայելել, և կամ այս իրաւունքները երբէք չէին կրնար կալ 'ի միասին ընդ ուղղափառութեան։ Եթէ կրնային վայելել զանոնք, ինչո՞ւ ուրեմն հերձուածողութեան կեղտը վրանին պիտի դրուէր՝ երբոր Հռոմայ արքունեաց անիրաւ յարձակմանց դէմ կպաշտպանէին զանոնք։ Իսկ եթէ երբէք չէին կրնար կալ 'ի միասին ընդ ուղղափառութեան, ինչո՞ւ ուրեմն, չըսեմ ընդհանուր ուղղափառ Եկեղեցին, այլ Հռոմայ արքունիքը և Բրոբականտան մինչեւ ցհրատարակումն Ռէվէրսուրուս աղետաբեր կոնդակին (1867 ին) ուղղափառ Ճանչցան Արեւելցիները, ուղղափառ Ճանչցան դարձեալ բոլոր Արեւելեան պատրիարքական աթոռները, հանդերձ լիուլի գործադրութեամբ սոյն իրաւանց, թէ 'ի կողմանէ Պատրիարքաց և թէ 'ի կողմանէ Արեւելեան ուղղափառ ժողովրդեան։

Ահաւասիկ հասանք Ռէվէրսուրուս կոնդակին աշխարհածանօթ խնդրոյն։ Ոչ է մեր գլխաւոր նպատակը սոյն կոնդակին քաղաքական կերպարանքն և տէրութենական իմաստը հետազօտել, և ոչ ալ քննել թէ ի՞նչպէս կեղծանէ այն արքունական իրաւունքը՝ որ այսօրուան օրս Արեւելեան ժողովուրդները կկառավարէ, և ոչ վերջապէս զննել թէ ի՞նչպէս տէրութեան և հպատակաց մէջ եղած նեղքին կապերը կխզէ այս կոնդակը։ Բաւական է մեզի իմաց տալը՝ որ Ռէվէրսուրուս կոնդակը Արեւելեան ուղղափառ Եկեղեցւոյն գոյութիւնը բաղկացնող ամենա-

հարկաւոր տարերց եղծումը կպարունակէ, որ է ըսել, կջնջէ անոր յատուկ կազմութիւնը, անոր նուիրապետութիւնը, հիմնական օրէնքները և սեփական եկեղեցական բարեկարգութիւնը և մինչեւ կապառնայ անուղղակի անոր արարողութեանը՝ որ Եկեղեցւոյ հասակակից է։ Այս է ահաւասիկ սոյն կոնդակին բովանդակութիւնը։

Ռէվէրսուրուս կոնդակը Արեւելեան պատրիարքաց և Եպիսկոպոսաց ընտրութիւնը և հաստատութիւնը Հռոմայ արքունեաց միայն կվերապահէ ուղղակի և անուղղակի կեղծ հնարքներով, կոչնչացնէ դարձեալ այն իրաւունքները՝ որոնք իրենց հնութեան համար սրբազան են, որոնք եկեղեցական և մարդկային իրաւանց վրայ հաստատուած ըլլալուն համար՝ օրինաւոր են, որոնք Գղերին և ժողովրդեան կվերաբերին իրենց մասնաւոր եկեղեցեաց մատակարարութեան մէջ։ Ահա այսպիսի հարստահարութիւն մը կգործէ Հռոմայ արքունիքը յանուն նոյն իսկ այն Պապերուն՝ որոնք ընդհանուր և տիեզերական ժողովքի մը մէջ երդուընցած են յարգելու և պատուելու Արեւելեան Պատրիարքաց իրաւունքները և արտօնութիւնները, ըստ այնմ. "Անարատ պահուելով բոլոր արտօնութիւնն-"ը և իրաւունքները Արեւելեան Պատրիարքաց" մինչ ընդհակառակն այսօր Ռէվէրսուրուս կոնդակը ոչ միայն այս Պատրիարքաց իրաւունքը կը յափշտակէ, այլ և անոնց գոյութիւնը իսկ 'ի հիմանց կխախտէ։ Միով բանիւ. Ռէվէրսուրուս

կոնդակին բովանդակութիւնը այս պարզ պայմանը կառաջարկէ Արեւելեան կաթողիկաց, կամ, կըսէ, հրաժարեցէք ձեր Արեւելեան գոյութենէն, ձեր եկեղեցիէն, ձեր կաղմութենէն, ձեր իրաւունքներէն, ձեր Եկեղեցական բարեկարգութենէն և յամենայնէ որ ձեզ նուիրական և կաթոդին է, և կամ զձեզ ուղղափառ չեմ ճանչնար և կնզովեմ։ Իսկ Արեւելեայք այսպէս կպատասխանեն. Ուղղափառութիւնը հիմնուած չըլլալով ուղղափառութեան պատրուակաւ զեղծող անձանց ինքնահաճ գործոց վրայ, Արեւելեայք ուղղափառ են և պիտի մնան, ինչպէս որ տասնեւմէն դարերէ 'ի վեր ուղղափառ եղած են, բայց Արեւելեան ուղղափառ՝ իրենց սեփական գոյութիւնը պահելով, և չեղան բնաւ և ոչ երբէք պիտի ըլլան լատինք, որովհետեւ լատինականութիւնը ճշմարիտ ուղղափառ ըլլալու համար ոչ երբէք թէութիւն մըն է առանց որոյ ոչ։

Սակայն Ռէվերսուրուս կոնդակը ոչ միայն իր մէջը բովանդակած նիւթերուն վրայօք զեղծումն պարուսակելուն համար իբր մեռեալ թուղթ մը կհամարուի, յար և նման այնչափ հարիւրաւոր անընդունելի և անգործադրելի կոնդակներուն՝ որոնք Հռոմայ արքունեաց կողմանէ ատեն ատեն հրատարակուած են, այլեւ բոլորովին ոչինչ է նաեւ իբր եղծիչ սկզբանց։ Ռէվերսուրուս կոնդակը Պապական իրաւանցը վերաբերեալ գործ մը չէ, այլ սոսկ անոր պատրիարքական իրաւանցը գործ մը կսեպուի, զորն որ Հռոմայ Քահանայապետը իբր Արեւմտեան Պատրիարք կրնար հրատարակել միայն իւր Արեւմտեան Պատրիարքական իրաւասութեան մէջ, իր Եպիսկոպոսաց և Արքեպիսկոպոսաց ընտրութեան և անոնց աթոռոց մատակարարութեան վրայօք և այլն և այլն։ Արդ՝ ինչպէս վերը ըսինք, Արեւելեայք իրենց առանձին Պատրիարքները ունենալով՝ ոչ երբէք Հռոմայ Քահանայապետաց Արեւմտեան պատրիարքութեան ներքեւ ընկած են, թող թէ անոնց նախագահական և եպիսկոպոսական իրաւասութեանը։ Ուստի Ռէվերսուրուս կոնդակը ենթադրելով իսկ՝ որ փոխանակ Արեւելեան Եկեղեցւոյն իրաւունքները սեղմելու՝ աւելի եւս ընդարձակէր զանոնք նորանոր արտօնութիւններով, 'ի վերայ այսր ամենայնի նոյն եղանակաւ պիտի մերժուէր Արեւելեան Եկեղեցիէն, վասն զի այդ գործը յաւէտ Արեւմտեան պատրիարքական իրաւասութիւն մը կենթադրէ Արեւելեայց վրայ. սկզբունք մի՝ որ բնաւ ընդունելի չէ եղած Արեւելեան Եկեղեցիէն, որովհետեւ եթէ այսպիսի սկզբունք մի ընդունուելու ըլլար՝ նովին գործով Արեւելեան եկեղեցին կոչընչանար, որ կկենայ, վասն զի մասնաւոր և յատուկ Արեւելեան պատրիարքական իրաւասութիւն մի ունի իր մէջը։ Այս նոյն պատճառիս համար է որ չկրնար բնաւ ընդունուիլ այն կեղծուպատիր առաջարկութիւնը ոմանց, որոնք Հռոմ դիմել կուզեն և Հռոմայու իշխանութենէն կսպասեն

Ռէվէրսուրուս կոնդակին վերցուիլը․ վասն զի նոյն իսկ այդ գործը օրինաւորութիւն և զօրութիւն մը շնորհել է իշխանութեան մը, որ Արեւելքի վրայ չզօրէր, այսինքն Արեւմտեան պատրիարքական իշխանութիւնը, ըստ այսմ այսպիսի առաջարկութիւն մը նոյն կերպով կեղծանէ Արեւելեան եկեղեցական դրութիւնը, ինչ կերպով որ կեղծանէր նոյն իսկ Ռէվէրսուրուս կոնդակին ընդունելութեանը ։

Եւ յիրաւի այսպիսի կոնդակ մը բոլորովին մեռեալ կմնար և ոչ իսկ խնդիր մի կյուզուէր անոր վրայ, թէ որ Հռոմայ արքունիքը յենարան մը չունենար Հայոց հասարակութեան մէջէն ելած կողմնակցութիւն մի՝ որն որ իբր անհարազատ որդիք Արեւելեան Եկեղեցւոյն, միաբանեցաւ դաւադիր ըլլալու իրեն բնիկ Եկեղեցւոյն դէմ, իրեն նոյն իսկ Արեւելեան գոյութեան դէմ, գլուխ ունենալով Հասուն Գերապայծառը, ուսկից Հասունեան անունը վրան առաւ ։ Անձնական խնդիրները մէկդի թողլով խնդիրը իր ճշմարիտ դիրքին մէջ դնենք ։ Պարզ եզրակացութիւն մի բաւական է ամէն բան բացայայտ ընել ։

Հասունեան կողմնակցութիւնը Ռէվէրսուրուս կոնդակը կընդունի, որ է ըսել, կհրաժարի կամովին իւր Արեւելեան եկեղեցիէն և իւր Արեւելեան կաթոլիկ ինքնութենէն, ընդգրկելով Արեւմտեան ուղղափառ լատին Եկեղեցւոյն կերպաւորութիւնը, լատին Եկեղեցւոյն մէջ ընկղմելով և զՀռոմայ Քահանայապետը ոչ միայն իբր Պապ ճանչնալով, այլ և իրեն սեփական Պատրիարքը ։ Աւելորդ կսեպենք դիտողութիւն իսկ ընել անոնց այսպիսի հակազգային և հակաԱրեւելեան ձեռնարկութեան վրայօք, որովհետեւ ուղղափառութեան վնաս մի չբերէր թէ Արեւելեան և թէ Արեւմտեան Եկեղեցւոյ պատկանիլը․ վասն զի, ինչպէս վերը յիշատակեցինք, այս երկու Եկեղեցիներն ալ մի ըլլալով ՚ի յէութեան՝ միայն իրենց գոլոյ եղանակին մէջ կտարբերին ։ Մինչեւ այս կէտս անմեղադրելի են հակառակորդք ։ Բայց թէ որ Հասունեանք և Արեւմտեայք և Հռոմայ արքունիքը և Բրօբականտան կթշնամանեն եւս Արեւելեան ուղղափառները այս մէկ հատիկ պատճառիս համար որ ասոնք Ռէվէրսուրուս կոնդակը չեն ուզեր ընդունիլ, որ է ըսել, հաւատարիմ կուզեն մնալ իրենց սեփական Եկեղեցւոյն, օրինացը, սահմանադրութեանց և կառավարութեան ձեւոյն ինչպէս ՚ի սկզբանէ հետէ մինչեւ ցայսօր, մէկ խօսքով չեն ուզեր ասոնք լատին Եկեղեցւոյ մէջ ընկղմիլ Արեւմտեան պատրիարքութեան ներքեւ մտնալով, ան ատեն կըսեմ սարսափելի անիրաւութիւն կգործեն ։ Իսկ եթէ զանոնք թշնամանելէն զատ՝ միշտ նոյն վերյիշեալ պատճառին համար, իբր հերձուածող, հերետիկոս և բանադրեալ եւս կդատապարտեն զանոնք, չէ թէ միայն ամենամեծ հակասութեան մէջ կիյնան, այլ և կհալածեն Արեւելեան ուղ-

5036-50

զափառութիւնը անոր աւերակաց վրայ լատին Եկեղեցին կանգնել ուզելով։

Ուրեմն, ինչպէս յայտնի կտեսնուի, ասիկայ եղբայրասպան պատերազմ մըն է, որովհետեւ Արեւմտեան ուղղափառ Եկեղեցին կՁանայ անհետացնել զԱրեւելեան ուղղափառ Եկեղեցին։ Ուստի ո՛վ որ ուրիշ մեկնութիւն կամ կերպարանք տալ կամենայ այս խնդրոյն, կամ չարամտութենէ մղուած և կամ պարզմտութենէ ընդարմացած պէտք է ըսուի։ Չարամտութիւն անոնց կողմանէ, որոնք որ Հռոմայ աբքունեաց դիտմանց հեղինակ եղած են, իսկ պարզմտութիւն այն բարի և միամիտ ուղղափառներուն կողմանէ՝ որոնք չկրնալով Արեւելեան և Արեւմտեան ուղղափառ Եկեղեցեաց գոյութեան եղանակը զանազանել, և ոչ իսկ նոյն Եկեղեցեաց արարողական և բարեկարգութեան տարբերութեանց արժէքը և սահմանը իմանալ, դիւրաւ և առանց խորհրդածութեան կդատապարտեն իբր հերձուածողութիւն և հերետիկոսութիւն Արեւելեան ուղղափառաց օրինաւոր դատին պաշտպանութիւնը։ Մինչ ընդհակառակն պէտք էին դիտնալ այս միամիտները որ ճշմարիտ ուղղափառ ըլլալու համար բաւական է մի ըլլալ 'ի հաւատս և 'ի բարոյս ընդհանուր ուղղափառ Եկեղեցւոյն հետ և անոր երեւելի գլուխ ճանչնալ Հռոմայ Քահանայապետը, ոչ թէ իբր Պատրիարք, այլ իբր Պապ, նոյն իսկ ըստ սկզբանց Հռոմէական աստուածաբանութեան։ Արդ՝ Ա-

րեւելեան կաթոլիկ Հայերը բոլոր ուրիշ Արեւելեցի ուղղափառաց հետ կդաւանին զայս ամենայն, սակայն միշտ պահանջելով իրաւամբ որ "Անարատ պիտի պահուին իրենց Պատրիարքաց "և անոնց պատրիարքական աթոռոց իրաւունքն "և արտօնութիւնները"։ Իրաւունք և արտօնութիւնք՝ զորոնք նոյն իսկ Պապերը հանդիսաւոր երդմամբ յարգեր և ճանչցեր են, որոնց վրայօք Արեւելեան կաթոլիկ Հայերը զիջողութիւն մը ո՛չ երբէք պիտի ընեն, վասն զի չեն պարտաւորուիր իբր ուղղափառք զիջողութիւն մը ընելու, վասն զի չեն ուզեր զիջանիլ՝ մնալով ուղղափառ, վասն զի չեն կրնար զիջանիլ իբր Արեւելեան ուղղափառք։

Արդ՝ ի՞նչ կրնայ ըլլալ արդեօք Տիփլոմացիայի վերաբերեալ անձանց պաշտօնը՝ երբ այսպիսի խնդրոյ՝ մի միջամուխ ըլլալ կմտաբերեն 'ի շնորհս Հասունեանց և 'ի վնաս Արեւելեան կաթոլիկ Հայոց։ Ո՞չ ապաքէն այդ միջամտութեան նպատակը պաշտպանել կըլլար լատինականութիւնը և հռոմէականութիւնը և ոչ բնաւ ուղղափառութիւնը. Թո՛ղ թէ հալածել մըն է Արեւելեան ուղղափառութիւնը, որ է ըսել, ուղղափառութիւնը պաշտպանելու պատրուակաւ՝ լատինականութիւնը պաշտպանել 'ի կործանումն Արեւելեան ուղղափառութեան։ Արդ՝ այսպիսի միջամտութիւն մի կրնա՞յ 'ի շահ և յօգուտ ըլլալ ուղղափառ Եկեղեցւոյն յընդհանուրն. կրնա՞յ 'ի շահ և յօգուտ ըլլալ Արեւելեան Եկե-

ղեցւոյն 'ի մասնաւորի։ Դարձեալ կրնայ յօգուտ և 'ի շահ ըլլալ Արեւելեան այնչափ անհուն Քրիստոնեայ ժողովրդոց, որոնք հանդիսատես կըլլան այս եղբայրասպան պատերազմին։ Վերջապէս կրնայ 'ի շահ և 'ի նպաստ ըլլալ նոյն իսկ այն ուղղափառ տէրութեանց՝ որոնք պարտք կհամարին միջամուխ ըլլալու սոյն խնդրոյն՝ 'ի վնաս և 'ի կործանումն Արեւելեան Եկեղեցւոյն։

Մինչեւ յարդ ըսածներնէս թող ուղղադատ անձինք արդար դատաստան մը կտրեն։ Բաւական է մեզի եզրակացուցանել՝ որ եթէ նոյն իսկ ուղղափառ Եկեղեցւոյն աստուածային հիմնադիրը Քրիստոս չպահանջէր լատինականութիւն Արեւելցիներէն իբր պայման ճշմարիտ և օրինաւոր ուղղափառ սեպուելու, ուրեմն և ոչ իսկ ուրիշ ո՛և իցէ իշխանութիւն մը և կամ հեղինակութիւն կրնայ քնաւ այս անտեղի պայմանը մեր առջեւը դնել։ Ընդունեցէք լատինականութիւնը, ապա թէ ոչ զձեզ ուղղափառ չեմ ճանչնար. պայման մը, զորն որ Ռէվէրսուրուս կոնդակը միայն իբր լուցկիք պատերազմի նետեց Արեւելեայց դէմ, զորն որ արծարծեցին և կարծարծեն անոր հետեւողքն և պաշտպանողք։



3386

ԱՀ

<< Ազգային գրադարան
NL0030285